ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանուն՝** Միլենա Հովհաննիսյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) 2025 թվականի հուլիսի 23-ից 25-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը՝** ՌԴ ֆինանսների նախարարության գիտահետազոտական ֆինանսական ինստիտուտ

5. **Գործուղման նպատակը՝**

«Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության միջև ՌԴ կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը պետական ֆինանսների կառավարման ոլորտում գիտամեթոդական աջակցության և տեխնիկական օժանդակության տրամադրման մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակում հերթական՝ 2026-2028թթ. եռամյա ծրագրի շուրջ բանակցությունների անցկացում:

6. **Քննարկված թեմաները՝**

1. Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության ԳՀՖԻ-ի (НИФИ-Научно-исследовательский финансовый институт при Минфине России) և Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության միջև համագործակցության առաջնահերթ ոլորտների ներկայացում
2. ԳՀՖԻ-ի հետ համագործակցության ծրագրի վերանայում և հետագա համագործակցության ուղիների պլանավորում
3. ՀՀ ՖՆ աշխատակազմի կարողությունների զարգացման եռամյա ծրագրի (2017, 2020 և 2023 թվականներ) արդյունքների վերանայում
4. ՀՀ ՖՆ աշխատակազմի կարողությունների զարգացման ծրագրի շարունակականության հարցի քննարկում

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Խորհրդակցությունների շրջանակներում քննարկվել են համագործակցության նոր հնարավորություններ՝ մատնանշելով, որ ՌԴ ԳՀՖԻ-ն արդեն 9 տարի շարունակ տրամադրում է մասնագիտական աջակցություն՝ սեմինարների, վերապատրաստումների և խորհրդատվությունների անցկացման միջոցով, ինչը նպաստում է ՀՀ ՖՆ աշխատակազմի կարողությունների զարգացմանը (առաջին եռամյա ծրագիրը մեկնարկել է 2017-ին, երկրորդը՝ 2020-ին, երրորդը՝ 2023-ին): Այս երկկողմ համագործակցությունը ոչ միայն ենթադրում է տեխնիկական աջակցության տրամադրում, այլև վստահության և գործընկերության խորացման հարթակ է, որը խթանում է պետական ֆինանսական կառավարման համակարգի արդիականացմանը: Հայ-ռուսական այս համապարփակ համագործակցությունը ներառում է մի քանի առաջնահերթ ուղղություններ՝

- Գիտահետազոտական և վերլուծական աշխատանքներ՝ ֆինանսական քաղաքականության, հարկային համակարգի, պետական բյուջեի կառավարման և տնտեսական զարգացման վերաբերյալ,

- Համատեղ ծրագրեր և նախագծեր՝ որոնք նպաստում են երկու երկրների ֆինանսական համակարգերի արդիականացմանը և բարեփոխմանը,
- Տվյալների և փորձի փոխանակում՝ ֆինանսական մոդելների, ռիսկերի գնահատման մեթոդների և ֆինանսական տեխնոլոգիաների կիրառման ոլորտներում:
- Հանրային ներդրումների արդյունավետ կառավարում,
- Միջազգային փորձի կիրառում՝ ռուսական փորձն օգտագործելով նորարարություններ ներդնել Հայաստանի ֆինանսական համակարգում,
- Կորպորատիվ մշակույթի խթանում:

Գործընկերների հետ հանդիպումների ընթացքում նաև նշվել է, որ ՀՀ ՖՆ-ն նախատեսում է իրականացնել մի շարք բարեփոխումներ՝ ուղղված աշխատակազմի կարողությունների և փորձառությունների կատարելագործմանը՝ պարբերաբար կազմակերպելով սեմինարներ, վերապատրաստումներ և խորհրդատվություններ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ՌԴ ֆինանսների նախարարությունը հավանության է արժանացրել հայկական կողմի նախաձեռնությունը ևս 3 տարի ֆինանսավորելու ծրագիրը, ինչպես նաև ԳՀՖԻ-ն ևս պատրաստակամություն է հայտնել աշխատել նոր եռամյա ծրագրի նախագծի ուղղությամբ՝ ընդգծելով հնարավորինս օգտակար ոլորտներ ՀՀ ՖՆ կարիքների ճիշտ հասցեագրման նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այս խորհրդակցությունները հնարավորություն են տալիս ամրապնդելու ՀՀ ՖՆ գործընկերությունը ԳՀՖԻ-ի հետ՝ ապահովելով կողմերի նպատակների և գործողությունների ավելի սերտ համադրվածությունը: Խորհրդակցությունների արդյունքում կհաստատվի ՀՀ ՖՆ աշտակազմի կարողություններ զարգացման ծրագիրը ևս 3 տարով ֆինանսավորելու վերաբերյալ որոշումը: Խորհրդակցությունները նաև կնպաստեն երկկողմ վստահության խորացմանը և գործընկերության ամրապնդմանը, կապահովեն բաց և կառուցողական երկխոսություն՝ որտեղ կողմերը հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց առաջնահերթություններն և հետաքրքրությունները:

10. Գործուղվող՝

Միջազգային համագործակցության վարչության պետ Միլենա Հովհաննիսյան

30.07.2025թ.